ՇԱՒԽԼՅԻՆԵՐԻՑ ՄՆԱՑԱԾ ԵՐԳԵՐ

Շառխրջիններ են կոչել գուսաններին։ Նրանք երգել են խմբովին և առանձին-առանձին՝ խնջույքների ժամանակ, հարսանյաց և նշանդրեքի, տոնաշնորհավորների ու բեֆերի ժամանակ, երգել ու նվագել են ուխտերի ժամանակ եկեղեցիների բակերում, «գուռաշի» տեղերում, շրջել են տները, գրնացել հայոց գյուղերը և բոլոր հայաբնակ վայրերը, ուր ապրել են նախիջևանցիք։ Ամենուրեք ժողովուրդը սիրում էր նրանց։ Քաղաքացիք վարձատրում էին նրանց փողով, խոշոր «շարաշներ» էին տալիս, իսկ գյուղացիք աալիս էին ցորեն։

Շառխրջիների մեջ հռչակ է ունեցել Աղասյալին։ Նա ապրել ու գործել է անցյալ դարի կեսերից մինչև 1880 թվականները։ Նրա մասին գովասանքով են խոսում նրան անձամբ ճանաչող Ռափայել Պստկանյանը և Հարություն Խտտամյանը իրենց երկերում։

Աղասյալին հորինել է շատ երգեր, որոնցից «Սամավարի երգը» մինչև օրս էլ Նախիջևանում և գյուղերում երգվում է մեծ հաջողությամբ։ Հայ չկա, որ չիմանա այդ երգը։ Մերերը պատմում էին, որ Աղասյալին երգել ու նվագել է «Խանադրար» անունով մի երգ, որը միշտ արցունք է խլել լսողներից։ Նա միշտ նվագել և երգել է «Քոռ-Օղլի», «Աշրդ-Ղարիբ»։ Այդ երգերը երգելու համար նրան հաճախ տարել են Ստավրուղոլ, Եկաաերինոդար և այլ քաղաքներ։

Աղասյալիի տունը Ռոստովում 29-րդ դծի վրա է, մինչև այժմ էլ կա։

1 ՍԱՄԱՎԱՐԻ ԵՐԳԸ

Սամավարը բաղվաղան է,
Միչի ճուրը պավաղան է.
(Մեչի չայը բավաղան է).
Չայ խոշտողին աչքը սիրիմ.
Զեռքեն պռնիմ, քովս պերիմ.

Սամավարը փախըռ-փախըռ,
Չայ ղըխմին շափրռ-շափըռ,
Չայ ասած պանըդ խիստ աղեգ պան է.
Մարթուս սիրդը ոըհաթ դանե,
(Չայ ասած բանդ խիստ լավ պան է.
Հարփած մարթոցը ոահաթ դանե)։

Չայ խոշտողին աչքը սիրիմ,
Զեռքեն պռնիմ, քովս պերիմ,
Սամավարիս ղոանթը օսկի,
Իմ Գուղաղես կուկս խոսրի։

Չայ խոշտողին աչքը սիրիմ,
Զեռքեն պռնիմ, քովս պերիմ,
Արձրթե փատնոս, ֆաոֆոոի կավաթ,
Ռոմին շիշան մեչը տրրաձ,
Նաղով կուկա, ղուղով կուկա,
Փատնոսը իլինք մեղի կուկա։

Հանե ռոմին շիշան, հանե՛,
(Հայդա ռոմին շիշան հաննեքք)
Տեղին չայը ղարմիր դանե
(Տեղին չայը գարմիր արեր)
Չայ խոշտողին աչքը սիրիմ,
Զեռքեն պռնիմ, քովս պերիմ։

Նաղով էղավ, ղուղով էղավ,
Փաանոսը իլինք փունջով էղավ,
Փունջ խոշտուլին աչքը սիրիմ,
Զեռքեն պռնիմ, քովս պերիմ։

Փունջ խմողը քեֆ դանե,
Փուչ տշխարհիս ղեվխը դանե,
Փունջ խոշտողին աչքը սիրիմ,
Զեռքեն պռնիմ, քովս պերիմ։

2

Խնամիներն էղան հազար պարով,
Զոցերն իլինք թուրինջ նաոով,
Քեֆ բիդ անին սամավարով։
Սամավարը կովագան է,
Մեչի ճուրը պավաղան է։

Սամավարի գոանթը օսկի,
Մախուլ պան է ամեն աղգի,
Չայ խոշտողը կուկա խոսքի։
Սամավարը կովագան է,
Մեչի Ճուրը պավագան է։
Չայ ասածդ շադ լավ բան է,
Բեհեղուր մարթուն ռահաթ դանե,
Չրխմողին ղոռ բիդ անե։
Սամավարը կովագան է,
Մեչի Ճուրը պավագան է։

Քամֆոռկան է վրան օյղուն,
Չայնիկը վրան գուգա խիստ կուն։
Սամավարը կովագան է,
Մեչի Ճուրը պավագան է։
Գամաց կուկա, նաղով կուկա,
Ռոմին շիշան մեչը տրած,
Փատնոսը իլինք մեղի կուկա։
Սամավարը կովագան է։
Մեչի Ճուրը պավագան է։

Արձաթե փատնոս ֆառֆոռ կավաթ,
Ռոմին շիշան օրթան տրած,
Սուսեն-փուսեն խմինք դաք-դաք։
(Չանինք շադ խոսք, խմինք դաք-դաք).
Աղաբալին խըփռ-խըփռ,
Ձեռքը ոտքը թըփռ-թըփռ
Չայ գխմե շափրռ-շափրռ։
Սամավարը կովագան է,
Մեչի Ճուրը պավագան է։
Աղաբալին ասպես մարթ է,
Փունջ խոշտողը գարմիր վարթ է։
Ռոմով փունջը ռեթեր սերթ է։
Սամավարը կովագան է։
Մեչի Ճուրը պավագան է[1]։

Վերջին նախիջևանցի «շառխրճին» էր Նիսվիթա գյուղի բնակիչ Հարություն Կարապետի Հարությունյանը, որը հայտնի էր բոլոր գյուղերում շառխրճի Յանթայի Արութին անունով։

Անցյալ դարի ամենավերջերին նա շառխին ձեռքը երկար սպիտակ մորուքը փրոած, շրջում էր հայ դյուղերը, նվագում ու երգում յուր հորինած երգերը։ Նա շատ էր սիրում ծաղրական երգեր, ծաղրում էր քահանաների և աղաների պակասությունները։ Նա հաճախ տեղնուտեղը հորինել էր երգեր ու երգել։ Պատմում էին, որ Սուլթան Սալա գյուղում ուխտի օրը երկու հարևան նստած խոսելիս տեսնելով Արութինին. հրավիրել են իրենց մոտ և խնդրել, որ նա երգի ու նվագի։ «Շառխիթ» (սաղի) նվագի և Արութինի երգերի աղդեցության տակ նրանք բերել են գինի, աբաղ, ուտելիքներ և սկսել քեֆ անել։ Դրացիներից մեկը ունեցել է հասած աղջիկ, իսկ մյուսը փեսացու տղա։ Արութինը տեսնելով նրանց, քեֆի ժամանակ, հորինել է հետևյալ երգը, որը առիթ է եղել քեֆ անող դրացիներին խնամիանալ։ Այդ երգը հետևյալն է.

3 ԱՌԱՋԱՐԿ

Ձեր աղբարը իլինք բուլի,
Մեր ադբարը բոլ կառտոփլի.
Արի մոշթինք մեգ հաղ բուլի,
Հանինք բոլգեգ կառթոփլի.
Բուլին խաշինք. փիլաֆ անինք,
Կառտոփլին ալ եղով գարգինք։
Էրգու շիշա սուգաք գինի,
Ցա չենե սանտուռինսկի,
Ուղինք, խրմինք, բեֆ անինք,
Հայգանուշին բեհ անինք,
Ագռփին հեղ նշանինք,
Ձմեռն ալ հարսնիք անինք։

ՊԱՏԱՍԽԱՆ

Հելրեթ գուն չիս մեղ ղնքահար,
Ամա գասիմ—դամքրդ դաղար,
Ընդունելի է խոսքդ բարի,
Հոժար իմ ես, ըլանք խնամի։
Շնորհավոր լա, բախտավոր լան,
Պարի փսաղի արժանի լան,
Արութինն ալ հոն բիդի լա,
Հեմ բիդ չալե, հեմ բիդ խաղա։

Յանթայի Արութինի այս երգ-առաջարկը բեֆ անող հարևանները յուրջ ընդունել են և դարձել խնամիներ։

Այս մեղ պատմել էր սուլթանսալայի Լուսեղեն Նողայանը, երդի մեջ հիշված Ակոփը եղել է նրա ադդականը։

Շառխրճի Արութինին են վերագրած և «Գեղացոց բեֆի երգը»։

---

[1] Այս երգի նոտագրված օրինակը տե՛ս սույն գրքում, Մ. Լյուլեճյանի ժողովածուն։

1 ԴԵՂԱՑՈՅ ՔԵՖԸ

Աֆերիմ, Նիսֆիթացիք,
Թոփտեցիք, Զալթըրցիք,
Սուլթան ու մեծ Սալացիք,
Ի՞նչ ին նոր Նախիջևանցիք,
Հայդա ղղաք, հայդա դղաք,
Քեֆ անինք մինք, քեֆ անինք։

Խամիշե ին. մեր դուները,
Սարայի մինք չինք ղար,
Նացանը փակ աուոերը,
Մերը հիչ փակ չի լալ։
Հայղա ղղաք, հայդա ղղաք,
Քեֆ անինք մինք, քեֆ անինք։

Մեր կործը՝ օրահ. հարման.
Գանել ու թոփ անել.
Գայել դուն. թուվար, հայվան,
Փառք մեղի դալ ու նստել։
Հայդա դղաք, հայդա դղաք.
Քեֆ անինք մինք. քեֆ անինք։

Մինք չըգիդինք ան ֆինդերը,
Սիրղերս բաց, տուռներս բաց,
Անհոդ ին մեր օրերը,
Նացանը դերդ ու լաց։
Հայղա դղաք. հայղա դղաք,
Քեֆ անինք մինք, քեֆ անինք։